## ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄ

Սեպտեմբերի 12-ից 18-ը Երևանում տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, որը կազմակերպել էին Սովետական Միության և Հայաստանի գիտությունների ակադեմիաները և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը: Նրա աշխատանքներին մասնակցելու էին հրավիրվել Սովետական Միության և աշխարհի շուրջ 20 երկրների մոտ 200 գիտնականներ:

Սիմպոզիումի պլենար նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 12-ին, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ա. Մ. Կիրակոսյանը:

Սովետական Հայաստանի կառավարության անունից ողջունելով սիմպոզիումի մասնակիցներին, ընկ. Ա. Մ. Կիրակոսյանը մասնավորապես ասաց, որ հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովը տեղի է ունենում այն օրերին, երբ հայ ժողովուրդը հանդիսավորությամբ նշում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը: Բարեկամությունը մեր երկրի ժողովուրդների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի հետ հանդիսանում է մեր քաղաքական, տնտեսական զարգացման և մշակույթի առաջընթացի հիմնական նախապայմանը: Մեզ համար մեծ է այս գիտաժողովի ոչ միայն գիտական, պատմական, այլև մշակութային-հասարակական նշանակությունը: Այն վկայում է, որ ի տարբերություն նախասովետական տարիների, այսօր Հայաստանն է հայագիտության կենտրոնը: Միաժամանակ հայագիտությունը բուռն վերելք է ապրել նաև հանրապետության սահմաններից դուրս, հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ու հոգևոր մշակույթը դառնում են միջազգային ավելի լայն գիտական շրջանների հետաքրքրության առարկան:

Հայ ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքում, այնուհետև ասաց ընկ. Ա. Կ. Կիրակոսյանը, միշտ հետամուտ է եղել աշխարհում ծնունդ առնող նոր գաղափարներին, հայացքը միշտ հառել է ժամանակի մշակույթի բարձունքներին, ձգտելով նրա հետ համաքայլ ընթանալ: Նա իր ինքնատիպ արվեստը երբեք չի կղզիացրել, չի պատսպարել, նրա դռները միշտ բաց է պահել միջազգային արվեստի բարերար հոսանքների առաջ: Եվ, մյուս կողմից, հայ ժողովուրդը միշտ ձգտել է իր մասնակցությունը բերել միջազգային քաղաքակրթությանը, իր արվեստի լավագույն արտահայտություններն ի սպաս դնել համամարդկային մշակույթին: Հայագիտության առաջատար ճյուղերի՝ բանասիրության, պատմության և հնագիտության կողքին գիտական մեծ կշիռ է ձեռք բերում նաև արվեստաբանությունը՝ որպես գիտության ինքնուրույն բնագավառ: Հայ ժողովրդի գեղարվեստական մշակույթի ուսումնասիրությունը մեզանում ստանում է նոր ծավալ, նոր որակ: Այդ երևույթի հասարակական նախադրյալները խարսխված են այն մեծ վերափոխումների վրա, որ տեղի են ունեցել հայ ժողովրդի կյանքի վերջին վեց տասնամյակների ընթացքում: Հենց այդ վերջին տասնամյակներն էլ հանդիսանում են մեր ժողովրդի քաղաքական և հոգևոր վերածնունդի ժամանակաշրջանը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության անունից սիմպոզիումի մասնակիցներին ողջունեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա մասնավորապես նշեց, որ մեր հանրապետության գիտությունների ակադեմիան հայ արվեստի ուսումնասիրության հարցերը համարում է հատուկ ուշադրության արժանի գործ: Այդ պրոբլեմների գիտական ուսումնասիրությունը նախ և առաջ անհրաժեշտ է պատմության ճիշտ ըմբռնման համար, այսօրվա արվեստի պրոբլեմների լուծման գործում միջնադարյան հայ արվեստի դերի գնահատման նոր ձևեր ու գաղափարներ առաջ քաշելու համար:

Սիմպոզիումի պլենար նիստն ավարտվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանի՝ «Հայաստանի արվեստի զարգացման անտիկ շրջանի մասին», Պ. Կունեոյի (Իտալիա)՝ «Հայ միջնադարյան քաղաքաշինության մասին» և Օ. Պոդոբեդովայի (Մոսկվա)՝ «Միջնադարյան գրքարվեստի պատկերագրության աղբյուրների հարցի շուրջը» զեկուցումներով:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 13-ին, սկսվեցին գիտաշրջանի մասնաճյուղերի աշխատանքները: Կարդացվեց ավելի քան 150 զեկուցում, որոնց թեման էր հին և միջնադարյան Հայաստանի մշակույթն ու արվեստը, միջնադարյան ճարտարապետությունն ու մանրանկարչությունը, ինչպես նաև հայ նոր և սովետական արվեստը:

Հին և միջնադարյան Հայաստանի մշակույթին և արվեստին նվիրված զեկուցումներով հանդես եկան Բ. Պիոտրովսկին՝ «Սկյութները և Ուրարտուն» (Լենինգրադ), Գ. Արեշյանը՝

«Կուր-արաքսյան մշակույթի արվեստը» (Երևան), Ա. Խոջաշը՝ «Ուրարտական արվեստի ուսումնասիրության հիմնական փուլերը և խնդիրները» (Մոսկվա), Զ. Բառնեյը՝ «Նոր հայացք ուրարտական արվեստի վրա» (Անգլիա), Մ. Սալվինին՝ «Ուրարտական ազդեցությունը Արևելքում» (Հռոմ), Գ. Տիրացյանը՝ «Ուրարտու և Հայաստան» (Երևան), Ն. Գարսոյանը՝ «Վահագն վիշապաքաղ» (ԱՄՆ), Խ. Մուշեղյանը՝ «Հելլենիստական շրջանի հայոց թագավորների դիմաքանդակները» (Երևան), ինչպես նաև Զ. Քարսվելը՝ «Երուսաղեմի Սուրբ Հակոբ հայկական եկեղեցու քանդակազարդ դուռը» (ԱՄՆ), Ն. Ալադաշվիլին՝ «Հայաստանի և Վրաստանի VI—VII և X դարերի մոնումենտալ քանդակագործության մեջ կտիտորների պատկերման մասին» (Թբիլիսի), Ա. Ղանալանյանը՝ «Ճարտարապետության և քարարվեստի հուշարձանների արձագանքները հայոց բանահյուսության մեջ» (Երևան), Լ. Ազարյանը՝ «Հայաստանի վաղ միջնադարյան կոթողների պատկերագրության մի քանի առանձնահատկությունների մասին» (Երևան), Վ. Է. Կլայնբաուերը՝ «Ավանդույթը և նորարարությունը Զվարթնոցի հարդարանքում» (ԱՄՆ), Մ. Ղազարյանը՝ «Անեղ դատաստանի» պուժեի մեկնաբանումը XVII—XVIII դարերի հայ կերպարվեստում» (Երևան), Ն. Թիերին՝ «Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարները, պատկերագրությունը և ոճը» (Ֆրանսիա), Պ. Մուրադյանը՝ «Հայ քաղկեդոնականների մշակութային գործունեությունը XI—XIII դարերում» (Երևան) և ուրիշներ:

Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում մեծ ներդրում ունեն արտասահմանյան երկրների և հատկապես իտալացի գիտնականները: Եվ պատահական չէր, որ այդ մասնաճյուղում ելույթ ունեցածների զգալի մասը հենց արտասահմանյան երկրների գիտնականներն էին, որոնցից Ֆ. Գանդոլֆոն հանդես եկավ «Հայ վաղ-քրիստոնեական ճարտարապետության մեջ ստրուկտուրայի և ֆունկցիայի կապերի հարցի շուրջը» (Իտալիա), Հ. Ղազանչյանը՝ «Հայկական մի քանի գմբեթների ստատիկ բնութագրում» (Իտալիա), Մ. դ'Օնոֆրիոն՝ «V—VII դարերի մի քանի հայկական պալատներ» (Իտալիա), Ա. Ալպագո-Նովելլոն՝ «Հայկական հուշարձանները Հյուսիսային Իրանի տարածքում» (Իտալիա), Գ. Ուլուհոջյանը՝ «Հյուսիսային Իրանի հայկական ճարտարապետական հուշարձանների վիմագրությունը» (Իտալիա), Ա. Տեր-Հարությունյանը՝ «Ազգիտի հայկական ամրոցը» (Անգլիա), Գ. Բրուխհաուզը՝ «Չորրորդ Հայք պատմական նահանգի հայկական եկեղեցիներն ու վանքերը» (ԳՖՀ), Կ. Հ. Կլինգենբուրգը՝ «Հայ ճարտարապետությունը գերմանական արվեստաբանների աշխատություններում» (ԳԴՀ) զեկուցումով, իսկ մեր հանրապետությունից և Սովետական Միությունից հանդես եկան Ստ. Մնացականյանը («Հայկական ճարտարապետության զարգացման մինչանիական փուլը»), Մ. Հասարթյանը («Թբիլիսիի հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձանները»), Ա. Թորամանյանը («XIV դարի հայկական ճարտարապետական հուշարձանները Մոլդավիայում»), Կ. Աֆանասևը («Հայաստանի ճարտարապետական համակառույցների համաչափության մասին») և ուրիշներ:

Ի թիվս այլոց հայ միջնադարյան մանրանկարչությանը նվիրված հետաքրքիր զեկուցումներ կարդացին ԳԴՀ-ից Բ. Բրենտիեսը («Հայ մանրանկարչությունը ԳԴՀ-ի հավաքածուներում»), ԱՄՆ-ից Ա. Սանջյանը («Կալիֆորնիայի համալսարանի XIV դարի Գլաձորի ավետարանի մասին»), Երևանից Լ. Խաչիկյանը («Կերպարվեստի հարցերը հայ միջնադարյան քարոզներում և մեկնողական գրականության մեջ»), Լենինգրադից Տ. Իզմայլովան («XII դարի հայկական մանրանկարչությունը»):

Գիտաժողովի մասնակիցները ուղևորություններ կատարեցին մեր հանրապետության տեսարժան վայրերը, եղան Էջմիածնում, Սարդարապատում, Գառնիում, Սևանա լճի մոտ, Դիլիջանում, դիտեցին Էջմիածնի Մայր տաճարը, Զվարթնոցի, Հռիփսիմեի, Գայանեի տաճարները, Գոշավանքի, Հաղարծինի, Գեղարդի վանքերը, Գառնիի հեթանոսական տաճարը և այլն:

Սիմպոզիումի աշխատանքն ավարտվեց սեպտեմբերի 18-ին: Նրա արդյունքներն ամփոփեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռ. Զարյանը:

Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումի աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Հ. Մ. Ոսկանյանը, ՀԿԿ Կենտկոմի բաժինների վարիչներ Յա. Ի. Խաչիկյանը, Ա. Ա. Մկրտչյանը, Լ. Պ. Մանասերյանը, կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, ստեղծագործական միությունների ղեկավարներ:

**Հ. ՍԻՄՈՆՅԱՆ**